

ՀԱՐԱԹԱԹԵՐԻ ԳԻՆԸ:

Տարեկան գինն է 5 ռուբլի (հետոյի ծախսով): Օտարաբաղա-
ջացի բաժանորդները պիտի գրեն այս հասցեով. В редакцію Армянской Газеты „Мшак“.
Թիֆլիսում կարելի է ստորագրել խաղաղատան մէջ (սրճար-
նու տուն) և պ. Մատուրեանցի խանութում:

ՄՇԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ:

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուող պիտի վճարէ 10
հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ: Յայտարարութիւններ
տպւում են շաբաթը, Երեւան, Վրացիք, Պրանսիայում, Գերմա-
նիայում և Թուրքիայում:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԹԱԹԵՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

«Մշակ» լրագրի 1874 թվի համար ստա-
րագրութիւնը տպւել է: Ստորագրող
կարելի է թիֆլիսում խմբագրատան
մէջ, առաւօտեան 9 ժամից մինչև 12-ը, և
երեկոյեան 5—7 (բացի կիրակի օրերից):
Կոնստանտնուպոլիսում և պ. Մատուրեանցի խա-
նութում: Օտարաբաղաջացիքը դիմում են
ուղղակի խմբագրութեանը հետևելու հասցեով՝
Тифлисъ, въ Редакцію газеты „Мшак“:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Մշակ» յայտարարութիւնը:—Ով է եկեղե-
ցու պաշտպանը:—Ներքին տեսութիւնը:
Թիֆլիսի ձիաբաշ կրկնութիւնը: Նամակ Ղրիմից:
Նամակ Ալուքից: Ներքին լուրեր: Արտա-
քին տեսութիւնը: Պրանսիայ: Գերմանիա:
Աւստրո-Ունգարիա: Սպանիա: Անգլիա: Թուր-
քիա: Շվեյցարիա: Ռուսիոյ Տէր-արքայա-
նու:—Խառն լուրեր: Աւետարան:—Յայ-
տարարութիւններ:—Ֆէլիէտօն:

ՈՎ Ե ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՇՏՊԱՆ

Ի՞նչ է եկեղեցին:
Հասարակական ժողովը:
Արեւմտ ազգ ու եկեղեցին անբաժան են
միմեանցից, չէ կայ եկեղեցին, որանք չը կայ
հասարակական ժողով, չէ կայ եկե-
ղեցի առանց ազգ, չէ կայ եկեղեցի ազգից
զուրա:

Մեր ազգի մէջ, ինչպէս և ամեն տեղ, կայ
երկու մեծ դաս՝ հոգեւորականները և աշխար-
հականները:

Այդ երկու դասերը միմեան կազմում են
եկեղեցին:

Անարդար կը լինէր կթէ ազգի այդ դա-
սերից մէկը սեփականացնել իրան միայն եկե-
ղեցի լինելու, եկեղեցուն ներկայացնելու իրա-
ւունքը, ինչպէս որ այդ անում են մեր այժ-
մեան հոգեւորականները: Մենք ենք եկեղե-
ցին, ասում են հոգեւորականները:

Տեսնենք, մեր հոգեւորականները, որք սե-
փականացնում են իրանց այդ բարոյական իրա-
ւունքը, կարող են և արդեօք ունեն մի-
ջոցներ այդ իրանց վրա վերցրած ծանր պար-
տաւորութիւնը լցուցանելու:

Ար ժամանակ հայոց պատմութեան մէջ,
օրինակ հինգերորդ դարում, երբ մեր հոգե-
ւորականները աւելի զարգացած էին, աւելի լու-

ստորութեամբ և ուսում առած էին քան թէ
աշխարհական դասը:

Այն ժամանակ նրանք էին, առաջնորդում
ժողովրդին:

Այժմ հակառակ երեւոյթ ենք նշմարում
մեր հասարակութեան մէջ՝ միայն աշխարհա-
կան դասի մէջ կայ ուսում, միջնակարգ թէ
բարձր կրթութիւն, իսկ հոգեւորականութիւնը
ընդհանրապէս աղէտ ու անզարգացած է:

Եթէ մեզանում կայ զիտութիւն, նա աշ-
խարհականների ձեռքումն է, եթէ կայ ման-
կավարժական հաստիք, աշխարհականների
ձեռքումն է, եթէ կան զրուհիներ, նրանք ամենքը
աշխարհականներ են, և ոչ մի հայ հոգե-
ւորականի զրկւոյ, վերջին ժամանակներս, չէ դուրս
կիկ զիտութեան վրա հիմնված մի օրինաւոր
զրկումը:

Այսպէս են արդեօք եկեղեցուն պաշտպանները
մնալ առանց ուսում, առանց զիտութեան,—
ոչ:

Ուրեմն ինչպէս կարող էք դուք հոգեւորա-
կանները պաշտպան հանդիսանալ եկեղեցու,
սեփականացնել միայն ձեզ եկեղեցին պաշտպա-
նելու իրաւունքը առանց աշխարհականների
օգնութեան, երբ որ ձեր մէջ չը կայ ուսում:

Այսպէս են արդեօք եկեղեցին կանգուն մնալ
առանց ուսումնարանի,—ոչ:

Ի՞նչի համար հարկաւոր է ուսումնարան,—
եկեղեցին պահպանելու համար:

—Այո, այդպէս է, ասում են հոգեւորա-
կանները, ուսումնարանները կը պատրաստեն
օրինաւոր հոգեւորականներին, և այն ժամա-
նակ դարձնալ հոգեւորականները կը լինեն եկե-
ղեցու հաւատարմի պաշտպաններ:

—Բայց ո՞վ պիտի պատրաստէ ուսումնա-
րանները մէջ օրինաւոր հոգեւորականների նոր
սերունդը:

—Մենք, պատասխանում են հոգեւորակա-
նները:

—Մենք, առանց մեզ, աշխարհականների
օգնութեան, դուք չէք կարող, որովհետեւ դուք
ողէտ էք, իսկ եթէ կայ զիտութիւն, նա միայն
մեր, աշխարհականների ձեռքումն է:

Չը մտածաք, որ եկեղեցին միայն դուք
չէք, այլ մենք և դուք միասին ...

Առանց մեր օգնութեան, դուք ոչինչ չէք
կարող անել:

Քչմարիտ է ձեր, այսինքն հոգեւորականների
օգնութիւնը եկեղեցուն անհրաժեշտ է, և իսկ
այդ պատճառով մենք պէտք է պատրաստենք
աւելի կրթված, աւելի լուսաւորված հոգե-
ւորականութիւնը, քան թէ դուք էք:

Աւ պատրաստել աւելի կրթված հոգե-
ւորականութեան նոր սերունդը, դուք մենակ,
առանց մեր օգնութեան չէք կարող անել,
որովհետեւ այժմ դուք աղէտ էք: *)

*) Մեր այդ խօսքերը ճշմարտութեան ապացոյց
թող լինեն այն հոգեւոր, որ մեր վեհապա-
տանում է հոգեւորական դասի մէջ ճշմարիտ կը-
թութիւնը մոռցնելու մասին: Խմբ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ԶԻԱՐԱՇ ԵՐԿՐՈՐԴԻՆ

Երբ որ մի երկրի մէջ երկաթուղին երի
միջոցով ճանապարհորդների կրթելութիւնը
և աղքատների տեղափոխութիւնը դառնում է
աւելի հեշտ, այն ժամանակ զգացվում է պա-
հանջ որ մի մեծ, կենդանական բաղադր, ինչ-
պէս թիֆլիսն է, որ մի կողմից արտասահմանի
հետ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղով կապ-
ված է, միւս կողմից շուտով կապված կը լինի
Աստղից ծովի հետ Բաղուրի երկաթուղով,—
ասում ենք, պահանջում էք զգացվում, որ
երկաթուղին հասնելով քաղաքը և բերելով աղ-
քանք ու ծանապարհորդներին, այդ աղքատները
կարող էր հեշտութեամբ և էժան գներով տե-
ղափոխվել քաղաքի մէջ գտնված զանազան
առևտրական կենդանիները, և որ նոյնպէս ճա-
նապարհորդների կրթելութիւնը հեշտացրած
լինի...: Նոյնպէս ցանկալի է որ ներքին դա-
ւաւանքից բերած և քաղաքի մէջ գտնված
պահանջներում դարձված աղքատները հեշտու-
թեամբ և էժան գներով տեղափոխվել մինչև
երկաթուղու կայարանը:

Այդ բանին հասնելու համար ուրիշ միջոց
չը կայ, եթէ ոչ շինել քաղաքի մէջ էլ, գոնէ

նրա զիտաւոր առևտրականութեան զծերի
վրա, մի ձեռքաշ երկաթուղի:

Արդէն 1870 թվին մի պարոն Գօրժանա-
կին առաջարկել էր վարչութեանը այդ տեսակ
ձեռնարկութիւն իրագործելու: Այն ժամա-
նակ չափորկեցաւ, դիցուք այն պատճառով
որ առանձին պահանջները էլ չը կար, որով-
հետեւ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղին դեռ
ևս պատրաստ չէր: Բայց այժմ անհրաժեշտ է
որ այդ տեսակ ձեռնարկութեան պահանջ
կայ:

Մենք լսում ենք որ բացի պ. Գօրժանակից
կայ այս բոլորիս և պ. Օնիկովից մի առա-
ջարկութիւն, որ և պէտք է քննվի քաղաքա-
յին վարչութեան ընդհանուր ժողովի նստումն
—արցը. նորանումն է թէ ո՞վ պիտի յանձն
առնի այդ տեսակ ձեռնարկութիւն ինքն քա-
ղաքը թէ կարելի է մի մասնաւոր բաժանորդ
դական ընկերութեան տող ձեռքաշ երկաթուղու
իրագործման կոնցեսիան: Մենք մեր կողմից,
յիշելով մոռաւանդ թէ ինչպէս է վճռել այդ
հարցը Պետերբուրգի քաղաքային վարչութիւնը
մայիսի 11-ին 1873 թվի, կասենք, թէ հար-
կաւոր չէ բոլորովին որ ինքն քաղաքը յանձն
առնէր այդ տեսակ ձեռնարկութիւն, որովհետեւ
նա առաջին պահանջներից չը լինելով, մի և
նոյն ժամանակ օգտաւետ և շահաւետ գործ
լինելով, պէտք է դառնայ մասնաւոր արդիւ-
նագործութեան առարկայ: Բայց մի և նոյն
ժամանակ այդ տեսակ ձեռնարկութիւն, որ
միլիոններ չէ պահանջում, այլ մի քանի տաս
հազարներ, ծիծաղելի կը լինէր կօնգրիցիա-
նէր հրատարակել և մրցութիւն նշանակել,
հաստատ իմանալով, որ ոչ Ռուսաստանից ոչ
Արտասահմանից ցանկացողներ չեն յայտնվի,
ինչպէս կարող էին յայտնվել ջրանցքի և
գազի գործի վերաբերութեամբ: Եթէ այդ
երկու նշանաւոր, կենսական խնդիրների հա-
մար մեր քաղաքային վարչութիւնը չը կա-
մեցաւ հրաւերել և կոնգրիցիան հրատարակել
ինչի պիտի հրաւերէ հրատարակել ձեռքաշ եր-
կաթուղու մասին, երբ որ այդ տեսակ ձեռ-
նարկութիւնը ներքին կապի տալիս երի
բաժանորդական մի ընկերութեան արդիւնա-

ՖԷԼԻՏՈՆ

Անցեալ հինգշաբթուայ ներկայացուցն շատ ան-
գոյն էր: Արդէն աֆիշայի վերա տեսնելով այն աղ-
գանդները, որոնք «Շէֆօլդ» և «Վոլ» արաքուրիս
պիտի պատկուրս պիտեաների դերերը պէտք է
կատարէին, մարդ ցանկանում էր օրօշտալ և իւր
ականջները ծածկել, կարծես նոքա վաղուց ցա-
ւում էին Շէֆօլդի նշանաւոր նախագետութիւն-
ների անհամ և չարակամի նման արտասանելուց:
Երբի այս էր պատճառը, որ հայ հասարակութիւնը
անցնելով կասալի առաջ միայն մէկ ծոյլ հայեացք
էին ձգում պ. Պետրովսկու վերա և իսկոյն հե-
ռանում էին, իսկ մէկ քանիւր մտնում էին պ. Մա-
տուրեանցի խանութը և վեց բուրժանոց լոճային
առաջարկում էին չորս բուրժ, ասելով, որ եթէ պ.
Մատուրեանցը այդ գնով չի տալ, նոքա կասալի
մօտ աւելի էժան կը գնեն: Ես պատահաբար անց-
նելով վերոյիշեալ խանութի առաջը, լսեցի պարոն-

ների առաջարկութիւնը, տեսալ պ. Մատուրեանցի
ուսերի վրա քաշելը և ճշմարիտ ասեմ շատ հե-
տաքերուցայ...: Եւ այդ անկարելի բան է, որ կասա-
յում նշանակուած գնից պակաս լինեն ծախում
տոմսակները, մտածեցի ես և մտաբերելով իմ
ողորմած հոգի պապ Թաթայի ասածը, որ ինչքան
սուտ ասեն չի լինի, որ մէկ փոքր մաս գոնեա
դրոյթ չը լինի նորա մէջ խառը, իսկոյն միտքս
դրի այս խօսքերի ճշմարտութիւնը նոյն գիշերը
իմանալ:

Երեկոյեան եօթը ժամն էր:
Ես վճռողական քայլերով գնում էի դէպի կաս-
սան, վճռողական քայլերով ասացի, որովհետեւ մէկ
ժամ դորանից առաջ մեծ հանդուկ էի վճռում,
այս հանդուկը հետեւան էր արդեօք երեկոյ մար-
դու հաշակուած գրուածքի ամենատարր ներկայա-
ցումն տեսնելու համար կարելի է թէ ոչ մէկ
բուրժ գոհել: Կարելի է, ասում էր ինձ յիմարու-
թիւնը, չէ, ասում էր ինձ խելքը: Ես մարդ եմ և
որովհետեւ մարդու մէջ յիմարութիւնը միշտ խել-

քին յաղթում է, իմ խելքիս էլ յիմարութիւնը յաղ-
թեց և ես վճռեցի իմ մէկ բուրժը քաղաքը տալ,
ասելով՝ ջանդամը նրա գուրն էլ ու ինն էլ հետը,
եթէ կամենում էք:

—Ինչո՞ւրեմ տալ ինձ տօմսակ № 112, ասացի
ես պ. Պետրովսկուն:

—Եթէ կամենում էք կայ առաջին կարգումը,
ասաց ինձ հետ ծանօթ կասիրը:

—Ես կը ցանկալի վերջին կարգումը, ասացի ես:

—Պատճառ,

—Ես կարճատեւ եմ, պատասխանեցի պարոնին,
ցանկանալով ծածկել օտարազգիից, որ ես ուզում
եմ գոնեա իմ ականջները պաշտպանել պ. դերա-
սաններից, և մի և նոյն ժամանակ չը մտածեցի,
որ յիմար բան եմ ասում: Վերջը տոմսակը, դրի
ջիւս և հեռացալ կասալից:

Ինձ պատահեցան մի և նոյն պարոնները, որոնք
պ. Մատուրեանցից չորս բուրժով ուզում էին լոճա
գնել:

—Գնեցիք լոճա, հարցրեցի ես:

- Այո, պատասխանեց նրանցից մէկը:
- Ո՞րն:
- Երէք բուրժով:
- Գնա՞հաւատում, այդ անկարելի է, որ թատ-
րոնի տոմսակ...
- Բիլէթ, էժան, ո՞վ է ուզում, կանչեց իմ կող-
քին մէկ ձայն:
- Այ տեսէք, ասաց ինձ հետ խօսողը:
- Լաւ տղա, էստի արի, կանչեցի ես բիլէթ ծա-
խողին:
- Ես մօտեցաւ:
- Ինչ բիլէթ ունիս, հարցրի ես, ու վրձնցիս
տալի:
- Լոճա, պատասխանեց ինձ բիլէթ ծախողը,
երեք մանէթով կուտամ քու աղիլ խաթիր համա:
- Ես վերցրի տոմսակը, նայեցի ամեն կողմից, ցոյց
տուի կասալին, դուրս եկաւ, որ տոմսակը ճիշդ
այն գիշերուան ներկայացումն էր: Կանչելով մէկ
կողմ բիլէթ ծախողին, ես առաջարկեցի նորան
չորս բուրժ, եթէ ինձ կասէ, ո՞վ է տուել նորան
այդ տոմսակը:

